Խոռոզ Թարգմանի, որ է խօսող: Այս յոյժ վախաշոտ էր, մինչ զի զերկու քորմն 'ի միասին կալաւ իւրն կին. և այլ մեծ չարիս գործեալ՝ ատեցեալ եղև յամենայն Հռովմայեցւոց. և յարեան 'ի վերայ նորա զօրքն՝ և սպանին զնա 'ի մէջ պալատանն իւրոյ:

Կղօդիոս՝ սկսաւ յամի տեառն Խ. Թագաւորել ամս ԺԴ: Սյան սորին կնոջն պատմի 'ի Յունաց, թէ՝ Պատրոնիկէ թագուհին՝ կին էր Կղօդիոսի, որ գնաց յԵրուսաղէմ՝ յաւուրս Տեառնեղբօրն, և եգիտ զխաչն Քրիստոսի. որ էր կին մի՛ այլ յոյժ պչրամոլ. և վասն այն գործոյն՝ սպան զնա. և էր Կղօդիոս՝ յոյժ որկրամոլ և արբեցող. վասն այն հրաման կարգեաց ամենայն մարդկան՝ անպատկառ և անամօթ ձգոտալ և փուք հանել՝ թէ՛ 'ի փողոցս և թէ՛ 'ի սեղանի. քանզի ասեն թէ բազումք մեռան, որք զայս առնել ամաչեցին: Յաւուրս սորա եղև սով ընդ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան